Տարեց մարդկանց իրավունքները

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 23-րդ հոդված

ՓԱՍՏԱԹԵՐԹ

European Social Charter | Charte sociale européenne

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հոդված 23. Տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքը

Տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ընդունել կամ խրախուսել համապատասխան միջոցառումներ, որոնք մասնավորապես ուղղված են՝

- հնարավորություն ընձեռել տարեց մարդկանց հնարավորին չափ երկար մնալ որպես հասարակության լիարժեք անդամներ՝ հետևյալ միջոցներով.

  ա) համապատասխան ռեսուրսներ, որոնք հնարավորություն կտան նրանց վարել վայելուչ կյանք և ակտիվ դեր խաղալ հասարակական, սոցիալական և մշակութային կյանքում,

  բ) տարեց մարդկանց համար մատչելի ծառայությունների ու մեխանիզմների և դրանցից օգտվելու հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրում

- հնարավորություն ընձեռել տարեց մարդկանց՝ ազատորեն ընտրելու իրենց կենսակերպը և վարելու անկախ կյանք իրենց հոգեհարազատ միջավայրում՝ այնքան ժամանակ որքան նրանք ցանկանում են և և որքան նրանց հնարավորությունները թույլ են տալիս, հետևյալ միջոցներով . .

  ա) նրանց կարիքներին և առողջական վիճակին հարմար բնակավայրի կամ նրանց բնակավայրում հարմարեցման նպատակով համապատասխան օժանդակության տրամադրում,

  բ) նրանց վիճակով պայմանավորված՝ առողջական խնամք և ծառայություններ,

- երաշխավորել հաստատություններում բնակվող տարեց մարդկանց համապատասխան աջակցությունը՝ հարգելով նրանց մենությունը և ապահովելով նրանց մասնակցությունը հաստատությունում կյանքի պայմանների վերաբերյալ որոշումների ընդունմանը:

Հիմնարար սկզբունքները

Խարտիան ներառում է իրավունքների մի շարք, որոնք թե՛ առանձին և թե՛ հավաքականորեն իրական աջակցություն են ապահովում տարեց մարդկանց՝ որպես հասարակության ակտիվ անդամներ: Այդ իրավունքները հիմնված են մի շարք սկզբունքների վրա, որոնք, ըստ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ), ուղղորդում են Խարտիայի դրույթների մեկնաբանությունը և կիրառումը.

- **Արժանապատվությունը** վճռորոշ նշանակություն ունի Մասնակից պետությունների կողմից Խարտիայով սահմանված նվազագույն չափանիշների պահպանման գործում, և միաժամանակ խորհրդանշում է անցում՝ օգնության և խնամքի հայրապետական մոտեցումից դեպի հավասար քաղաքացիության վրա հիմնված մոտեցում:

- **Անկախությունը** երաշխավորում է, որ տարեց մարդիկ կարող են ընտրել իրենց սոցիալական պաշտպանությունը և կենսակերպը՝ ապահովված լինելով կամայական զրկումներից պաշտպանող երաշխիքներով: Այդ առումով Մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ սուբստիտուտիվ (փոխարինող) որոշումների համակարգերը աջակցված որոշումների

համակարգով փոխարինելու համար, որն արժևորում է անձի անկախությունը, կամքը և նախապատվությունները:

- **Հավասարությունը,** ինչպես ամրագրված է «Ե» հոդվածում ընդգծվում է բազմազանության արժևորումը և իրական հավասարության ապահովման համար դրական քայլերի անհրաժեշտությունը:

- **Համերաշխությունը** արտացոլում է մարդու սոցիալական բնույթը և ներառում է ռեսուրսների վերաբաշխում հանրային օգնության և սոցիալական ապահովագրության համակարգերի միջոցով:

- **Մասնակցությունը** ենթադրում է հասարակական կյանքին և սոցիալական իրավունքների իրավական և քաղաքական որոշման և իրականացման գործընթացներին իմաստալից և արդյունաբեր մասնակցություն:

23-րդ հոդվածի շրջանակը

Խարտիան եզակի է նրանով, որ նախատեսում է *sui generis* դրույթ, որը վերաբերում է բացառապես տարեց մարդկանց իրավունքներին: 23-րդ հոդվածը մարդու իրավունքների առաջին պայմանագրային դրույթն է, որը հատուկ պաշտպանում է տարեց մարդկանց իրավունքները: Այն հիմնված է հիմնական գաղափարների վրա, որոնցից առանցքայինը մարդու ինքնավարության և անկախության անշեղ պաշտպանությունն է՝ անկախ տարիքից: 23-րդ հոդվածով ամրագրված է նաև սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության գաղափարը:

Խարտիայի 23-րդ հոդվածը պահանջում է, որ Մասնակից պետությունները ստանձնեն պարտավորություն՝ ընդունելու կամ խրախուսելու՝ թե՛ անմիջականորեն, թե՛ հանրային կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ, համապատասխան միջոցներ, որոնց նպատակն է հնարավորություն տալ տարեց մարդկանց մնալու հասարակության լիիրավ անդամներ: «Հասարակության լիիրավ անդամ» արտահայտությունը, որն օգտագործվում է 23-րդ հոդվածում, ենթադրում է, որ տարեց մարդիկ չպետք է որևէ կերպ ենթարկվեն մեկուսացման միայն իրենց տարիքի պատճառով: Հասարակության կյանքի տարբեր ոլորտներին մասնակցելու իրավունքը պետք է երաշխավորվի բոլորին՝ թե՛ ակտիվ, թե՛ թոշակառու, թե՛ հաստատությունում բնակվող, թե՛ չբնակվող:

Հոդվածը կառուցված է երեք փոխկապակցված մասերից, որոնք ընդգրկում են տարեց մարդկանց բարեկեցության տարբեր կողմերը՝ աշխատանքային ոլորտից դուրս: Այն պարտավորեցնում է Մասնակից պետություններին մշակել համապարփակ, միջոլորտային միջոցառումներ, որոնք կպատասխանեն ծերացող բնակչության բազմազան կարիքներին՝ առողջապահության, սոցիալական ապահովության և աջակցության, բնակարանի, ինչպես նաև աղքատության և մեկուսացման դեմ պաշտպանության ոլորտներում: Այս դրույթով նախատեսված միջոցառումները՝ իրենց նպատակներով և դրանց իրականացման միջոցներով, մատնանշում են տարեց մարդկանց կյանքի նոր և առաջադեմ ընկալում, պարտավորեցնելով Մասնակից պետություններին մշակել և իրականացնել համահունչ գործողություններ տարբեր ոլորտներում:

Իրավական դաշտ

23-րդ հոդվածի կիրարկումը բնութագրվում է իր դինամիկ բնույթով՝ զարգանալով փոփոխվող հասարակական ընկալումների և տարեց մարդկանց իրավունքների ու

կարիքների վերաբերյալ մարդու իրավունքների չափանիշներին համահունչ: Մեկնաբանությունը Կոմիտեի գործունեության շնորհիվ զգալիորեն զարգացել է: համապատասխանաբար, 23-րդ հոդվածը ներառում է հետևյալ պարտավորությունները.

Խտրականության բացառում

- Խարտիայի 23-րդ հոդվածը պարտավորեցնում է Մասնակից պետություններին ընդունել համապարփակ օրենսդրություն՝ պայքարելու տարիքային խտրականության դեմ ոչ միայն զբաղվածության ոլորտում, այլև՝ ապրանքների, հարմարությունների և ծառայությունների, առողջապահության, կրթության, և մի շարք ծառայությունների, այդ թվում՝ ապահովագրության և բանկային պրոդուկտների մատչելիության:

- Տարեց մարդկանց նկատմամբ խտրականությունը սոցիալական իրավունքների իրացման առումով նաև հակասում է «Ե» հոդվածին, որը հատուկ արգելում է Խարտիայում ամրագրված իրավունքների իրագործման ընթացքում խտրականության բոլոր ձևերը, այդ թվում՝ տարիքային խտրականությունը: Թեև «Ե» հոդվածը ինքնին չի ստեղծում Մասնակից պետությունների դեմ բողոքների ներկայացման ինքնուրույն հիմք, այն ապահովում է, որ Խարտիայի իրավունքների կիրառման ընթացքում խտրականությունը չհանդուրժվի:

- Կոմիտեն տարբերակում է ուղղակի և անուղղակի խտրականությունը: Ուղղակի խտրականությունը նշանակում է անհատներին տարբեր կերպ վերաբերվել համադրելի իրավիճակներում՝ առանց օրինական նպատակի, օբյեկտիվ հիմքերի կամ համաչափության: Անուղղակի խտրականությունն առաջանում է այն ժամանակ, երբ թվացյալ չեզոք օրենսդրությունը անհամաչափորեն ազդում է որոշակի խմբի վրա՝ հաշվի չառնելով համապատասխան տարբերությունները կամ չապահովելով հավասար հասանելիություն: Վերջին գործերի շրջանակում Կոմիտեն ուսումնասիրել է անուղղակի խտրականությունը՝ գնահատելով, թե արդյոք թվացյալ չեզոք օրենքները անարդարացիորեն ազդում են որոշակի խմբերի, օրինակ՝ տարեց մարդկանց վրա: Կոմիտեն նաև մտահոգված է բազմակի խտրականության և ինտերսեկցիոնալության (փոխկապակցված) խնդիրներով, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող տարեց կանանց առնչությամբ:

Էյջիզմ (տարիքի հիման վրա անհատների կամ խմբերի նկատմամբ կարծրատիպ և խտրականություն):

- Ընդհանուր ուշադրությունը, որը Խարտիայում դրվում է սոցիալական իրավունքների վրա՝ որպես անձնական անկախության հիմք և որպես տարեց մարդկանց արժանապատվության և համայնքում լիարժեք կյանքի իրենց իրավունքի արժևորման միջոց, պահանջում է նվիրվածություն տարիքային խտրական վերաբերմունքների, ինչպես նաև այն օրենքների, քաղաքականությունների ու այլ միջոցների հայտնաբերմանն ու վերացմանը, որոնք արտացոլում կամ ամրապնդում են տարիքային խտրականությունը: Կոմիտեն պատշաճ կերպով հաշվի է առնում տարիքային խտրականության ժամանակակից սահմանումները, որոնք վերաբերում են ուրիշի կամ սեփական անձի նկատմամբ տարիքի հիման վրա ուղղված կարծրատիպերին, նախապաշարմունքներին և խտրականությանը:

- Մասնակից պետությունները, տարիքային խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն ընդունելուց բացի, պետք է ձեռնարկեն լայն շրջանակի միջոցառումներ հասարակությունում տարիքային խտրականության դեմ պայքարելու համար:

Այդ միջոցները ներառում են՝

- գործող օրենքների և քաղաքականությունների վերանայում (անհրաժեշտության դեպքում նաև փոփոխում)՝ տարիքով պայմանավորված խտրականությունը վերացնելու համար,
- գործողությունների ծրագրերի ընդունում, որոնք տարեց մարդկանց համար երաշխավորում են հավասար հնարավորություններ և իրավունքներ,
- հասարակության լայնածավալ իրազեկման արշավների միջոցով ծերացման նկատմամբ դրական վերաբերմունքի խթանում և միջսերնդային համերաշխության խթանում

Իրավունակություն

Խարտիայի 23-րդ հոդվածը նաև պահանջում է, որ ներպետական իրավական դաշտում ապահովված լինի տարեց մարդկանց աջակցված որոշումների կայացման համակարգ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույն որոշումներ ընդունելու իրավունքը: Տարեց մարդկանց չի կարելի համարել իրենց վերաբերող որոշումներ կայացնելու անունակ միայն այն պատճառով, որ նրանք ունեն որոշակի առողջական խնդիր կամ հաշմանդամություն: Մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ սուբստիտուտիվ որոշումների կայացման համակարգերը փոխարինելու աջակցված որոշումների կայացմամբ, որը հարգում է անձի անկախությունը, կամքն ու նախապատվությունները: Նման միջոցառումները կարող են կրել թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ բնույթ:

Տարեց մարդիկ կարող են կարիք ունենալ աջակցության՝ իրենց կամքն ու նախապատվությունները արտահայտելու համար, ուստի պետք է կիրառել հաղորդակցության բոլոր հնարավոր միջոցները՝ բառեր, պատկերներ և նշաններ: Այս առումով ներպետական իրավական դաշտը պետք է նախատեսի համապատասխան երաշխիքներ՝ կանխելու տարեց մարդկանց ինքնավար որոշումների կայացման

հնարավորությունից կամայական զրկումը: Պետք է երաշխավորվի, որ տարեցների անունից գործող ցանկացած անձ նվազագույն չափով միջամտի նրանց ցանկություններին և իրավունքներին:

Բռնության կանխարգելում

Մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել համապատասխան միջոցներ տարեց մարդկանց նկատմամբ բռնության դեմ (ինչպես ինստիտուցիոնալ խնամքի համատեքստում, այնպես էլ դրանից դուրս)՝ իրազեկման արշավների, օրենսդրական դաշտի և ինստիտուցիոնալ երաշխիքների միջոցով: Մասնավորապես, Մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ խնդրի ծավալը գնահատելու, տարեց անձանց նկատմամբ բռնության կամ անտեսման վերացման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և օրենսդրական կամ այլ միջոցներ ձեռնարկելու՝ բռնության հնարավորությունը կանխելու համար: Բռնությունը կարող է դրսևորվել ֆիզիկական, հոգեբանական կամ հուզական, սեռական և ֆինանսական ձևերով, ինչպես նաև արտահայտվել դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ անտեսման միջոցով՝ ինչպես հասարակության լայն շրջանակում, այնպես էլ սոցիալական ծառայությունների և խնամքի հաստատություններում:

Բավարար ռեսուրսների և տեղեկատվության հասանելիության ապահովում

Հոդված 23-ի առաջին մասը կարևորում է այն պայմանների ստեղծումը, որոնք թույլ են տալիս տարեց մարդկանց վարել ակտիվ կյանք և լիարժեք մասնակցել հասարակության կյանքին: Դա ենթադրում է բավարար ռեսուրսների (օրինակ՝ կենսաթոշակների և նպաստների) ապահովում, ներառյալ եկամտի մակարդակ, որը համապատասխանում է հասարակական չափանիշներին և հնարավորություն է տալիս բավարարել կենսական կարիքները, ինչպիսիք են բնակարանը, սնունդը, մշակութային գործունեությունը և տրանսպորտը: Այն նաև պահանջում է բավարար տեղեկատվության տրամադրում հասանելի աջակցության ծառայությունների և դրանց հետ կապված ծախսերի վերաբերյալ՝ հարմարեցված տարեց բնակչության ըմբռնման և հասկացողության կարիքներին:

Բավարար ռեսուրսներ

Կոմիտեն կարևորում է Մասնակից պետությունների պարտավորությունը՝ ձեռնարկել դրական միջոցներ, որոնք կապահովեն, որ տարեց մարդիկ արժանապատիվ կյանք վարելու և հասարակական, սոցիալական ու մշակութային կյանքում ակտիվորեն մասնակցելու համար ունենան բավարար եկամուտ և կարողանան անխոչընդոտ օգտվել սոցիալական նպաստներից: Մասնակից պետությունները պետք է կրկին անդրադառնան իրենց թոշակային համակարգերին (և՛ կուտակային, և՛ ոչ կուտակային, որտեղ կենսաթոշակները պետք է ինդեքսավորվեն աշխատավարձերի և սպառողական գների համատեքստում) ուսումնասիրեն լրացուցիչ դրամական վճարներ կամ արժեկտրոններ տրամադրելու հնարավորությունը, ինչպես նաև տարեց բնակչության շրջանում աղքատության մակարդակը:

Այս համակցված ռեսուրսային փաթեթը համադրվում է երկրի եկամուտների և աղքատության ներպետական ցուցանիշների հետ (օրինակ՝ միջին աշխատավարձերի մակարդակի և աղքատության շեմին հասնելու ռիսկը), որպեսզի հնարավոր լինի գնահատել դրա համարժեքությունը: Հոդված 23-ը պահանջում է, որ նվազագույն եկամուտը լինի այնպիսի մակարդակի, որ նպաստը կազմի երկրի զուտ համարժեք միջնարժեքի առնվազն 50%-ը:

Տեղեկատվության, ծառայությունների և հարմարությունների հասանելիություն

Թեև Հոդված 23-ը ուղղակիորեն վերաբերում է միայն ծառայությունների և հաստատությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, այն ենթադրում է նաև այդ ծառայությունների և հաստատությունների առկայություն: Այդ պատճառով Կոմիտեն ուսումնասիրում է ոչ միայն դրանց վերաբերյալ տեղեկատվության մատուցումը, այլև ծառայությունների և հաստատությունների առկա վիճակը: Անդամ պետությունները պետք է տրամադրեն մատչելի տեղեկատվություն (բոլոր հնարավոր միջոցներով, որոնք հարմարեցված են տարեց անձանց կարիքներին և նրանց հասկանալի լեզվով) և պարզեն, թե արդյոք տեղեկատվությունը արդյունավետորեն ստացվել է, թե ոչ:

Այդ պահանջից բացի, Կոմիտեն գնահատում է ծառայությունների առկայությունը, ծավալը և ծախսը, ծառայություններ, ինչպիսիք են տնային օգնությունը, համայնքային ծառայությունները, հիշողության խանգարումներ ունեցող անձանց համար նախատեսված ցերեկային խնամքի կենտրոնները, վերականգնողական բուժումը, սննդի մատակարարումը, բնակարանային խնամքը, արտակարգ իրավիճակների համար նախատեսված ապաստարանները, ինչպես նաև մշակութային, ժամանցային և կրթական հաստատությունները:

Բազմաթիվ ծառայություններ (և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը) գնալով ավելի մատչելի են դառնում առցանց, իսկ թվայնացումը նոր հնարավորություններ է ընձեռում տարեցներին: Սակայն տարեց մարդիկ համեմատաբար սահմանափակ կարող են օգտվել ինտերնետից և հաճախ չունեն անհրաժեշտ հմտությունները: Ուստի Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն համարում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ տարեցների թվային հմտությունները զարգացնելու, թվային ծառայությունները նրանց համար մատչելի դարձնելու և միաժամանակ ապահովելու ոչ թվային ծառայությունների շարունակականությունը:



Ինքնավարության, անկախության և կենսակերպի ընտրության խթանում

Հոդված 23-ի երկրորդ մասը երաշխավորում է տարեց մարդկանց՝ այդ թվում հիվանդության կամ հաշմանդամության հետևանքով սահմանափակումներ ունեցողների, իրավունքը՝ ինքնուրույն որոշումներ ընդունել իրենց կյանքի վերաբերյալ: Դա ներառում է ընտրությունը՝ որտեղ և ինչպես ապրել, որն ապահովվում է համապատասխան բնակարանային տարբերակների և անհրաժեշտ սոցիալական և առողջապահական ծառայությունների շնորհիվ: Մասնակից պետություններին կոչ է արվում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի ընտրության այս ազատությանը՝ ապահովելով, որ տարեցները կարողանան հնարավորինս երկար պահպանել իրենց անկախությունը նախընտրած կենսապայմաններում:

Բնակարանային ապահովում

Կոմիտեն կարևորում է տարեց մարդկանց առողջական կարիքներին համապատասխանող պատշաճ բնակապահովման իրավունքը՝ որպես պետական կամ տեղական բնակապահովման քաղաքականությունների բաղադրիչ: Այն կոչ է անում մշակել քաղաքականություններ, որոնք կօժանդակեն «տեղում ծերանալու» իրավունքահեն մոտեցմանը՝ ապաստարանային/աջակցվող բնակարաններով և տների հարմարեցմանն օժանդակությամբ՝ անկախ ապրելը հնարավոր դարձնելու համար:

Մասնակից պետությունները պետք է տարեցների համար ապահովեն պատշաճ բնակարանների բավարար առաջարկ և հասնեն էական առաջընթացի ողջամիտ ժամկետներում՝ ֆինանսավորումն իրականացնելով առկա ռեսուրսների ծախսարդյունավետ օգտագործման սկզբունքին համապատասխան: Դա ենթադրում է կարիքների և ռեսուրսների վերաբերյալ վիճակագրության վարում, պարբերական ազդեցության գնահատումներ, նպատակների իրագործման ժամանակացույցերի սահմանում և խոցելի տարեցների վրա քաղաքականությունների ազդեցության գնահատում: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել ողջամիտ սպասման ժամկետներ՝ տարեցների համար նախատեսված բնակարանային տարբերակներին հասնելու համար, քանի որ ժամանակավոր ապաստարաններում չափազանց երկար մնալը խախտում է Խարտիայով սահմանած իրավունքները:

Առողջապահություն

Կոմիտեն շեշտել է, որ տարեցների առողջապահությունը դուրս գալիս է հիմնական բժշկական օգնության շրջանակներից և ներառում է մասնագիտացված ծառայություններ, ինչպիսիք են հոգեկան առողջության ծրագրերը և պալիատիվ խնամքը: Բացի այդ, այն ընդգծել է Մասնակից պետությունների կողմից տարեցների առողջապահության վերաբերյալ ուղեցույցների մշակման անհրաժեշտությունը և միջոցառումների իրականացումը, որոնք միտված են տարեցների գերիատրիկ և երկարաժամկետ խնամքի մատչելիության, հասանելիության և որակի բարելավմանը, ինչպես նաև սոցիալական և առողջապահական ծառայությունների համակարգմանը: Այս համատեքստում Կոմիտեն մանրակրկիտ ուսումնասիրում է խնամքի հետ կապված ծախսերը, մասնավորապես տնային խնամքի և դեղագործական ապրանքների արժեքը, որպեսզի ապահովի, որ դրանք չդառնան անհամաչափ ֆինանսական բեռ տարեցների համար: Առողջապահական ծառայությունները պետք է գտնվեն մոտակայքում կամ հասանելի լինեն տանը, իսկ տարեցներին պետք է պարտադիր ներգրավել իրենց խնամքին և բուժմանը վերաբերող բոլոր որոշումներում:

Ինչպես ընդգծել է Կոմիտեն, թեև Covid-19-ի ճգնաժամը բացահայտեց և սրեց տարեցների նկատմամբ հավասար վերաբերմունքի պակասը, Խարտիայի 23-րդ հոդվածը հավասարապես կիրառվում է Covid-19-ի կամ նմանատիպ համատեքստերում:

Առողջապահության ոլորտում արձանագրվել են դեպքեր, երբ բժշկական տեսակավորման (տրիաժի) քաղաքականության սահմաններում սակավ ռեսուրսների բաշխումը (օր.՝ օդափոխիչներ) իրականացվել է տարեցների կյանքի որակի կամ «արժեքի» մասին կարծրատիպային պատկերացումների հիման վրա: Կոմիտեի համաձայն, բժշկական ռեսուրսների բաշխման որոշումները չպետք է հիմնվեն միայն տարիքային չափանիշի վրա, և տրիաժի ընթացակարգերը պետք է մշակվեն և կիրառվեն այնպես, որ ապահովեն այդ որոշումների հիմնավորումը բացառապես բժշկական կարիքների և առկա լավագույն գիտական ապացույցների հիման վրա:

Ապաինստիտուցիոնալացում և ինստիտուցիոնալացված տարեց մարդկանց պաշտպանություն

Ապաինստիտուցիոնալացում

Կոմիտեի կարծիքով, ինստիտուցիոնալացումը մեկուսացման ձև է, որն հաճախ հանգեցնում է ազատության, ընտրության և անկախության կորստի: Խարտիայում ընդգծված է տարեցների անձնական ինքնավարության և արժանապատվության նկատմամբ հարգանքը, ինչը պահանջում է հրատապ քայլեր ձեռնարկել տարեցների ինստիտուցիոնալացումից հրաժարվելու համար և դրա փոխարեն ներդրումներ կատարել հասարակական հիմքով աջակցության համակարգերում՝ որպես հատուկ հաստատություններին այլընտրանք:

Covid-19 համաճարակը ընդգծեց ինստիտուցիոնալ խնամքի թերությունները: Խարտիայի Հոդված 23-ի պահանջով՝ տարեցներին իրենց ծանոթ միջավայրում մնալու հնարավորություն տալը դարձավ առավել կարևոր, հաշվի առնելով վարակման բարձրացած ռիսկը ծերանոցներում և այլ երկարաժամկետ ինստիտուցիոնալ և բնակելի հաստատություններում: Հասարակությունում ապրելու իրավունքը իրականություն դարձնելու համար հասարակությունում ներդրումներ կատարելու վերաբերյալ մարդու իրավունքների վրա հիմնված փաստարկն այժմ ավելացվել է հանրային առողջապահության փաստարկին՝ հօգուտ երկարաժամկետ խնամքի կարիքներին պատասխանելու հարցում հաստատություններից աստիճանաբար հրաժարվելու մոտեցման:

Ինստիտուցիոնալ խնամք

Երկարաժամկետ խնամքի կարիք ունեցող տարեցները պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության պայմանները: Այս առումով Կոմիտեն խրախուսում է Մասնակից պետություններին մշակել և իրականացնել ապաինստիտուցիոնալացման ռազմավարություն՝ ցուցադրելով այս նպատակի ուղղությամբ արձանագրված շոշափելի առաջընթացը: Այն դեպքերում, երբ անցումային փուլում ինստիտուցիոնալացումը խուսափելի չէ, Հոդված 23-ի երրորդ մասը կարևորում է, որ խնամքի հաստատություններում բնակվող տարեցները ստանան բավարար աջակցություն՝ միաժամանակ պահպանելով իրենց հիմնարար իրավունքները՝ գաղտնիության, արժանապատվության և կյանքի հետ կապված որոշումների կայացման գործընթացներին մասնակցության: Մասնակից պետությունները պետք է ապահովեն բավարար, մատչելի և պատշաճ կարգավորվող ինստիտուցիոնալ խնամքի հաստատությունների առկայություն, որոնք կարժևորեն այդ իրավունքները և կկանխեն վատ վերաբերմունքը կամ անտեսումը:

Հոդված 23-ը պահանջում է, որ հաստատություններում բնակության պայմանները և խնամքը լինեն բավարար, պահպանելով հետևյալ հիմնական իրավունքները . ինքնավարության իրավունք, գաղտնիության իրավունք, անձնական

արժանապատվության իրավունք, հաստատությունում կյանքի պայմաններին առնչվող որոշումների կայացման մեջ մասնակցելու իրավունք, գույքի պաշտպանության իրավունք, մերձավոր անձանց հետ անձնական կապը պահպանելու իրավունք (այդ թվում՝ ինտերնետային կապի մատչելիության միջոցով), ինչպես նաև հաստատություններում խնամքի և վերաբերմունքի վերաբերյալ բողոք ներկայացնելու իրավունք:

Հաստատություններում խնամքը պետք է լինի մատչելի, իսկ ծախսերի հոգալու համար անհրաժեշտ է ապահովել աջակցություն: Բոլոր հաստատությունները պետք է արտոնագրված լինեն և ենթարկվեն անկախ վերահսկող մարմնի ստուգումներին: Կոմիտեի համաձայն՝ նույնիսկ մասնավոր ծառայությունները պարտավոր են համապատասխանել սահմանված չափանիշներին: Այս դրույթի շրջանակում դիտարկվում են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են անձնակազմի որակավորման պահանջները, վերապատրաստման գործընթացները և աշխատավարձերի մակարդակը, հարկադիր տեղավորումը, սոցիալական և մշակութային հարմարությունները, ինչպես նաև ֆիզիկական զսպման և հանգստացնող դեղամիջոցների կիրառումը:

Տարեց մարդկանց վերաբերող խարտիայի այլ դրույթները

Շատ առումներով Հոդված 23-ի ընդհանուր փիլիսոփայությունը՝ հավասար և ակտիվ սոցիալական քաղաքացիությունը, արդեն արտացոլված է Խարտիայի այլ սուբստանտիվ դրույթներում: Այնուամենայնիվ, 23-րդ հոդվածը ձևավորում է համապարփակ փիլիսոփայություն, որը հնարավորություն է տալիս մյուս իրավունքներին կյանքի կոչել տարեց մարդկանց համատեքստում: Խարտայի այդ իրավունքները ներառում են հաշմանդամություն ունեցող (տարեց) մարդկանց անկախության, սոցիալական ինտեգրման և հասարակական կյանքին մասնակցելու իրավունքը (հոդված 15), ինչպես նաև ընտանիքի սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանության իրավունքը (հոդված 16՝ համակցված հոդված 27-ի հետ), հաշվի առնելով տարեց մարդկանց համար ընտանեկան աջակցության կարևորությունը, քանի որ նրանց երկարատև խնամքի կարիքները մեծանում են, և ընտանեկան բռնությունից և դաժան վերաբերմունքից պաշտպանության անհրաժեշտությունը, հատկապես տարեց կանանց պարագայում:

Վերջապես, Խարտիայի համապատասխան դրույթները ներառում են առողջության պաշտպանության (հոդված 11), աղքատությունից և սոցիալական մեկուսացումից պաշտպանության (հոդված 30) և բնակարանային ապահովման (հոդված 31) սուբստանտիվ իրավունքները, որոնք ակտիվ սոցիալական քաղաքացիության բնական նախապայման են: Ե հոդվածը ներառյալ, որն արգելում է խտրականությունը տարիքի և այլ հիմքերով:

Համապատասխան կոլեկտիվ բողոքներ

Տարեցների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան (FIAPA) ընդդեմ Ֆրանսիայի, Գանգատ թիվ 210/2022, ընդունելիության մասին որոշում՝ 21 մարտի 2023 թ. ՝ առողջապահական մասնագետների պալատի խորհրդի ընտրություններին թեկնածուների համար սահմանված 71 տարեկանի սահմանափակում (Խարտիայի հոդվածներ 23, 5 և «Ե»): *Սպասվում է ըստ էության վորոշում:*

Տարեցների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան (FIAPA) ընդդեմ Ֆրանսիայի, Գանգատ թիվ 205/2022, ըստ էության որոշում՝ 2025 թ. մարտի 18՝ տարեց մարդկանց իրավական և դատական պաշտպանություն (Խարտիայի հոդվածներ 23, 15 (հաշմանդամ անձանց անկախության, սոցիալական ինտեգրման և համայնքային կյանքին մասնակցության իրավունք), 16, 30, 31, «Ե» և «Է»):

Երեխաների պաշտպանության միջազգային կազմակերպությունը (DCI) և այլք ընդդեմ Իսպանիայի, Գանգատ թիվ 206/2022, 2024 թ. սեպտեմբերի 11-ի գործով ըստ էության որոշում՝ էլեկտրաէներգիայի անջատումների ազդեցությունը տարեց մարդկանց առողջության և բնակարանային վիճակի, ինչպես նաև նրանց սոցիալական պաշտպանության վրա (Խարտիայի 31, 16, 17, 30, 23, 11, 15, 20, 27 և «Ե» հոդվածներ):

«Validity Foundation» մտավոր հաշմանդամության պաշտպանության կենտրոնն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, Գանգատ թիվ 188/2019, 2023թ. հոկտեմբերի 17-ի գործով ըստ էության որոշում՝ տարեց հիվանդներին ցանցկեն վանդակ-մահճակալներում տեղավորելը որպես զսպման միջոց առողջապահական հաստատություններում (1961 թ. Խարտիայի 1988 թ. լրացուցիչ արձանագրության 23-րդ հոդված/4-րդ հոդված և Խարտիայի 11-րդ հոդված):

«Validity Foundation» ընդդեմ Ֆինլանդիայի, Գանգատ թիվ 197/2020, 2023 թ. մարտի 23-ի ըստ էության որոշում՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ 2020 թ. գարնանը կորոնավիրուսի ազդեցության արձագանքը՝ (Խարտիայի 11, 14, 15 և «Ե» հոդվածներ):

Հունաստանի ՕՏԵ հեռահաղորդակցության խմբի թոշակառուների ասոցիացիան (PAP-OTE) ընդդեմ Հունաստանի, Գանգատ թիվ. 165/2018, 2022 թ. մայիսի 17-ի ըստ էության որոշում՝ ֆինանսական ճգնաժամի ընթացքում իրականացված թոշակային բարեփոխումներ և կրճատումներ (Խարտիայի հոդվածներ 12§2, 12§3 և 23):

Տարեցների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան (FIAPA) ընդդեմ Ֆրանսիայի, Գանգատ թիվ 162/2018, 2020 թ. դեկտեմբերի 10-ի ըստ էության որոշում՝ Առողջապահական մասնագետների պալատի խորհրդի ընտրություններին թեկնածուների համար սահմանված 71 տարեկանի սահմանափակում (Խարտիայի հոդվածներ 23, 5 և «Ե»):

Տարեցների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան (FIAPA) ընդդեմ Ֆրանսիայի, Գանգատ թիվ 145/2017, 2019 թ. մայիսի 22-ի ըստ էության որոշում՝ տարիքային թուլության շահագործման քրեական պատիժ (Խարտիայի հոդվածներ 23 և «Ե»):

Fellesforbundet for Sjøfolk (FFFS) ընդդեմ Նորվեգիայի, Գանգատ թիվ 74/2011, 2013թ. հուլիսի 2-ի ըստ էության որոշում՝ նավաստիների պարտադիր թոշակի անցնելը 62 տարեկանից բարձր սահմանային տարիքով (Խարտիայի հոդվածներ 1, 24 և «Ե»):

Ֆինլանդիայի խնամողների կենտրոնական ասոցիացիան ընդդեմ Ֆինլանդիայի, Գանգատ թիվ 71/2011, 2012 թ. դեկտեմբերի 4- ըստ էության որոշում՝ տարեցների համար սպասարկվող կամ 24-ժամյա խնամքով սոցիալական բնակարանների արժեքի օրենսդրական կարգավորման բացակայություն (Խարտիայի հոդվածներ 13, 14, 16 և 23)::

Ֆինլանդիայի խնամողների կենտրոնական ասոցիացիան ընդդեմ Ֆինլանդիայի, Գանգատ թիվ 71/2011, 2012 թ. դեկտեմբերի 4- ըստ էության որոշում՝ տարեցների համար սպասարկվող կամ 24-ժամյա խնամքով սոցիալական բնակարանների արժեքի օրենսդրական կարգավորման բացակայություն (Խարտիայի հոդվածներ 13, 14, 16 և 23):

Ֆինլանդիայի խնամողների կենտրոնական ասոցիացիան ընդդեմ Ֆինլանդիայի, գանգատ թիվ 70/2011, 2012 թ. դեկտեմբերի 4- ըստ էության որոշում՝ ընտանիքի և ընկեր խնամակալների ֆինանսական աջակցության համակարգի հավասարություն՝ կախված բնակության վայրից (Խարտիայի հոդված 23):

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH) ընդդեմ Իռլանդիայի, Գանգատ թիվ 42/2007, 2008 թ. հունիսի 3-ի ըստ էության որոշում՝ կուտակային ծերության թոշակների ստացումը այն անձանց կողմից, ովքեր երկրում մշտապես չեն բնակվում (Խարտիայի հոդված 23՝ հոդված «Ե»-ի հետ համադրությամբ և Հոդված 12):

→ Այլ համապատասխան փաստաթղթեր

- ՍԻԵԿ, Սոցիալական իրավունքներ և կենսապահովման ծախսերի ճգնաժամ՝ անդրադարձ Մասնակից պետությունների ad hoc զեկույցներին, 2025թ.
- ՍԻԵԿ, Հոդված 23-ի մեկնաբանություն՝ տարիքահեն խտրականություն, 2021թ.
- ՍԻԵԿ, COVID-19-ի և սոցիալական իրավունքների վերաբերյալ հայտարարություն, 2021թ.
- ՍԻԵԿ, Հոդված 23-ի վերաբերյալ վերջին եզրակացությունները, 2021թ.
- ՍԻԵԿ, Հոդված 23-ի մեկնաբանություններ, 1991-2013թթ.

Եվրոպական սոցիալական խարտիան, որն ընդունվել է 1961 թվականին և վերանայվել 1996 թվականին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երկնմանակն է տնտեսական և սոցիալական իրավունքների ոլորտում:

Այն երաշխավորում է մարդու իրավունքների լայն շրջանակ՝ կապված աշխատանքի, բնակարանի ապահովման, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության հետ: Համաեվրոպական մակարդակում որևէ այլ իրավական փաստաթուղթ չի տրամադրում սոցիալական իրավունքների այնպիսի ընդգրկուն և լիարժեք պաշտպանություն, ինչպես նախատեսված է խարտիայով:

Ուստի խարտիան դիտարկվում է որպես Եվրոպայի սոցիալական սահմանադրություն և համարվում է էական բաղադրիչ մայրցամաքում մարդու իրավունքների կառավարման գործում:

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

European Social Charter | Charte sociale européenne

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE